ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
**PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI**

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1 , 403 սենյակ
*հեռ (+374) 25324114, 91199324*
*էլ. փոստ info_alaverdi@aarhus.am*
*anushevoyan@rambler.ru*

*Lori, Alaverdi,*
*Zoravar Andranik str.8/1, 403*
*Tel. (+374) 25324114, 91199324,*
*E-mail info_alaverdi@aarhus.am*
*anushevoyan@rambler.ru*

ՀՀ Բնապահպանության
նախարար պարոն
Ա. Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին

1. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ –ին պատկանող պոչամբարների անձնագրերի պատճենները
2. Շամլուղի հանքավայրի անձնագիրի պատճեն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով
Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Անուշ Էվոյան
16.04.2015թ.